«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է «Երևանի Մխիթար Հերացու
անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի 2015 թվականի ապրիլի 17-ի թիվ 01 որոշմամբ

Նոր խմբագրությամբ հաստատվել է «Երևանի Մխիթար Հերացու
անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի 2026 թվականի ապրիլի 23-ի նիստի թիվ 06 որոշմամբ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) «Հոգաբարձուների խորհրդի աշխատակարգով» (այսուհետ՝ աշխատակարգ) սահմանվում են Համալսարանի Հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատանքի կազմակերպման կանոնները, այդ թվում նիստերի հրավիրման, նախապատրաստման, քվեարկության անցկացման, որոշումների ընդունման, նիստերի արձանագրման, Խորհրդի նախագահի և ռեկտորի ընտրության ընթացակարգերը:

2. Սույն աշխատակարգի իրավական հիմքերն են «Հիմնադրամների մասին», «Կրթության մասին», «Բարձրագույն կրթության և գիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Համալսարանի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

3. Խորհուրդը Համալսարանի կառավարման մշտապես գործող բարձրագույն մարմինն է, որի յուրաքանչյուր անդամի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

4. Խորհուրդը ձևավորվում է «Բարձրագույն կրթության և գիտության մասին», «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքների և Համալսարանի կանոնադրությանը համապատասխան:

5. Խորհուրդն իր անդամների կազմից կարող է ձևավորել հանձնախմբեր, որոնք կարող են ուսումնասիրել որոշակի հարցեր, իրականացնել նախատեսված հարցերի նախնական

քննարկումը, դրանց վերաբերյալ Խորհրդին եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար:

ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:

7. Խորհրդի առաջին նիստը, մինչև Խորհրդի նախագահի ընտրությունը, նախագահում է Խորհրդի առավել տարիքով անդամը:

8. Խորհուրդը պարբերաբար հրավիրում է հերթական նիստեր և կարող է հրավիրել արտահերթ նիստեր:

9. Խորհրդի հերթական նիստերը գումարվում են առնվազն տարեկան մեկ անգամ՝ Խորհրդի նախագահի կողմից: Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև Խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով, Խորհրդի նախագահի կողմից, համապատասխան պահանջը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել կապի միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հեռակա հարցման կարգով :

10. Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Եթե Խորհրդի նիստում քննարկվում է Խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Խորհրդի այդ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

11. Խորհրդի նիստերի աշխատանքները կազմակերպում է Խորհրդի քարտուղարը՝ Խորհրդի նախագահի ղեկավարությամբ:

12. Խորհրդի քարտուղարն ընտրվում է Խորհրդի կողմից բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա անդամների մեծամասնությամբ: Խորհրդի քարտուղարի թեկնածություն կարող են առաջարկել Խորհրդի անդամները:

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Խորհրդի անդամների կեսից ավելին:

14. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, եթե «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով, Համալսարանի կանոնադրությամբ և սույն աշխատակարգով ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ:

15. Նիստի մեկնարկից անմիջապես առաջ Խորհրդի քարտուղարը գրանցում է Խորհրդի անդամներին: Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին նիստին ներկա չլինելու դեպքում Խորհրդի նախագահը նիստը հետաձգում է մինչև մեկ ժամ ժամանակով: Այդ ժամկետից հետո Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին նիստին ներկա չլինելու պատճառով՝ քվորումի բացակայության դեպքում, Խորհրդի նախագահը հետաձգում

է նիստը և հրավիրվում նիստ՝ ոչ շուտ քան մեկ օր և ոչ ուշ քան տաս աշխատանքային օրվա ընթացքում: Հետաձգված նիստը գումարվում է նույն օրակարգով:

16. Խորհրդի նախագահը բացելով նիստը հրապարակում է քվորումի առկայության մասին և քվեարկության է դնում առաջարկվող օրակարգը:

17. Խորհրդի անդամները կարող են օրակարգի համար առաջարկել հարցեր, որոնք դրվում են քվեարկության: Օրակարգի հարցերի քննարկման կարգը, զեկույցների և ելույթների տևողությունը որոշում է Խորհուրդը:

18. Խորհուրդը կարող է որոշում ընդունել փակ նիստ կամ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու մասին:

19. Խորհրդի նիստերը անցկացվում են առկա կամ հեռավար կարգով: Գաղտնի քվեարկություն նախատեսող նիստերն անցկացվում են միայն առկա եղանակով: Հեռավար նիստերը անցկացվում են էլեկտրոնային փոստի կամ հեռավար հաղորդակցման հարթակի միջոցով՝ իրական ժամանակում: Ինչպես առկա այնպես էլ հեռավար կարգով անցկացվող խորհրդի նիստերը հրավիրվում են խորհրդի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից խորհրդի անդամներին ներկայացված նիստի օրակարգի և դրանում ներառված որոշումների նախագծերի ներկայացմամբ: Խորհրդի անդամների մասնակցությունը էլեկտրոնային փոստի միջոցով անցկացվող նիստին հավաստվում է պատասխան գրությամբ, որը պարտադիր ներառվում է խորհրդի որոշումներին կողմ կամ դեմ լինելու վերաբերյալ գրառումը: Խորհրդի անդամը պատասխան գրության մեջ կարող է ներառել առաջարկություններ և դիտողություններ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ: Հեռավար հաղորդակցման էլեկտրոնային հարթակի միջոցով՝ իրական ժամանակում անցկացվող նիստերին խորհրդի անդամները իրենց դիտողությունները և առաջարկությունները, ինչպես նաև խորհրդի որոշումներին կողմ կամ դեմ լինելու վերաբերյալ դիրքորոշումը ներկայացվում են բանավոր կարգով:

20. Խորհրդի նիստերը անկախ դրա անցկացման եղանակից, արձանագրվում են: Խորհրդի արձանագրությունները ստորագրում են հոգաբարձուների խորհրդի քարտուղարը և նախագահը: Արձանագրության մեջ նշվում են՝ նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը, հոգաբարձուների խորհրդի անդամների քանակը, նիստին մասնակցած հոգաբարձուների խորհրդի անդամների քանակը, անունները, ազգանունները, նիստի օրակարգը: Արձանագրությունը պետք է պարունակի նիստում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, նիստի ընդունած որոշումները:

Հոգաբարձուների խորհրդի նիստին կարող են մասնակցել նաև հրավիրված այլ անձինք:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

21. Խորհուրդը ղեկավարում է Խորհրդի կողմից ընտրված նախագահը:

22. Խորհրդի նախագահին ընտրում են Խորհրդի անդամները՝ Խորհրդի ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, Խորհրդի անդամի լիազորությունների ժամկետով:

Խորհուրդն իրավասու է նաև որոշում կայացնել Խորհրդի նախագահի փակ գաղտնի քվեարկությամբ ընտրելու մասին: Այդ դեպքում քվեարկությունն անցկացվում է սույն աշխատակարգով Համալսարանի ռեկտորի փակ գաղտնի ընտրության համար նախատեսված կանոններով:

23. Խորհրդի նախագահի թեկնածու առաջադրվում է Խորհրդի անդամների կողմից՝ Խորհրդի անդամների կազմից, բացառությամբ ակադեմիական կազմի և ուսանողության ներկայացուցիչների:

24. Թեկնածու(ներ)ի ներկայացումից հետո Խորհրդի նախագահողի առաջարկով մեկնարկում է քննարկում: Նախագահողը թեկնածու(ներ)ին տալի է ելույթի հնարավորություն՝ որպես կանոն մինչև 10 րոպե տևողությամբ: Թեկնածուի ելույթից հետո Խորհրդի անդամները կարող են հարցեր տալ: Հարցի տևողությունը չպետք է գերազանցի 2 րոպեն: Պատասխանը պետք է լինի հակիրճ: Թեկնածուին տրվող հարցերը պետք է լինեն միայն թեկնածուի ելույթի շրջանակներում:

25. Ելույթներից և քննարկումներից հետո Խորհրդի նախագահողը Խորհրդի անդամներին ծանոթացնում է քվեարկության ընթացակարգին:

26. Խորհրդի նախագահն իր լիազորություններն իրականացնում է «Բարձրագույն կրթության և գիտության մասին», «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքներին, Համալսարանի Կանոնադրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

27. Համալսարանի գործադիր մարմնի՝ ռեկտորի լիազորությունների ժամկետի ավարտից ոչ պակաս քան վեց և ոչ ավել քան տասներկու ամիս առաջ, Խորհուրդի կողմից հաստատված տեքստի հիման վրա Համալսարանի պաշտոնական կայքում հրապարակվում է մրցույթի միջոցով ռեկտորի ընտրության հայտարարությունը, որտեղ նշվում է սույն աշխատակարգի 37-րդ կետով սահմանված տեղեկատվությունը:

Նոր ընտրված ռեկտորը ստանձնում է իր պարտականությունների կատարումը Համալսարանի գործող ռեկտորի լիազորությունների ժամկետի ավարտի հաջորդ օրը:

28. Խորհրդի որոշման հիման վրա սույն աշխատակարգի 27-րդ կետով սահմանված հայտարարության հրապարակման օրից 26-րդ օրը հրավիրվում է խորհրդի նիստ՝ ներկայացված փաստաթղթերի հիման վրա թեկնածուներին քվեաթերթիկում ներառելու

հարցը քննարկելու վերաբերյալ, իսկ հայտարարության հրապարակման օրից 30-րդ օրը նշանակվում է Համալսարանի ռեկտորի ընտրության օր:

Ռեկտորի պաշտոնի մրցութային ընտրության օրը կարող է նշանակվել նաև շաբաթ օրերին, իսկ բացառիկ և անհրաժեշտ դեպքերում նաև կիրակի կամ տոնական օրերին:

29. Ռեկտորի պաշտոնում կարող է ընտրվել Հայաստանի Հանրապետության այն գործունակ քաղաքացին, որը ունի գիտական աստիճան և առնվազն 5 տարվա ակադեմիական և գիտական ստաժ:

30. Մրցույթի միջոցով ռեկտորի ընտրության Թեկնածուներն ինքնառաջադրվում են:

31. Ռեկտորն ընտրվում է բաց մրցութային ընտրությամբ՝ Խորհրդի նիստում, փակ գաղտնի քվեարկությամբ, Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, 5 տարի ժամկետով:

32. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ռեկտորի պաշտոնում, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

33. Ռեկտոր չի կարող ընտրվել այն անձը՝

ա) ով դատապարտվել է հանցագործություն կատարելու համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով մարված կամ հանված չէ.

բ) ում օրենքի համաձայն արգելվում է զբաղեցնել ղեկավար պաշտոններ.

գ) ով նախընթաց 3 տարվա ընթացքում եղել է սնանկացման պատճառով լուծարված և պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար.

34. Ռեկտոր ընտրված անձի լիազորությունները դադարեցվում են Խորհրդի որոշմամբ, եթե նա՝

ա) դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ.

բ) օրենքի համաձայն, արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել.

գ) նախընթաց երեք տարվա ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

35. Ընտրության արդյունքով ռեկտորի պաշտոնում նշանակված անձի լիազորություն-ները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե՝

ա) անձը դիմել է դրա համար.

բ) լրացել է նրա 65 տարին.

գ) անձը իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի.

դ) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.

ե) նա ավելի քան երեք օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի.

զ) նա նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ, կամ առաջ են եկել սույն աշխատակարգի 34-րդ կետով նախատեսված հանգամանքները.

է) նա իր գործառույթներն իրականացնելիս բուհին իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է բուհի կամ գիտական կազմակերպության տարեկան բյուջեի հինգ տոկոսը.

ը) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

թ) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.

ժ) մեկ տարվա ընթացքում օրենքի խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության.

ի) առաջացել է սույն օրենքով նախատեսված այլ հանգամանք:

36. Համալսարանի ռեկտորի պաշտոնի թեկնածու առաջադրվելու մասին դիմումները կարող են ներկայացվել Խորհրդի քարտուղարին՝ հայտարարության հրապարակման օրվանից 25 օրվա ընթացքում:

37. Համալսարանի ռեկտորի մրցութային ընտրության հայտարարության մեջ ներառվում են՝

ա) մրցույթին մասնակցելու համար դիմումների ընդունման վայրը և ժամկետները, մրցույթի անցկացման վայրը, օրը և ժամը,

բ) Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ սույն աշխատակարգի 38-րդ կետին համապատասխան.

գ) հավակնորդին ներկայացվող պահանջները՝ սույն աշխատակարգի 30-րդ կետին համապատասխան:

38. Մրցույթին մասնակցելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) Համալսարանի ռեկտոր առաջադրվելու մասին հավակնորդի դիմումը՝ ուղղված Խորհրդի նախագահին,

բ) անձնագրի և Հանրային ծառայությունների համարանիշի մասին տեղեկանքի կամ նույնականացման քարտի պատճենը,

գ) աշխատանքային, ներառյալ ակադեմիական և գիտական գործունեության համապատասխան ստաժի առկայությունը հավաստող փաստաթուղթ (քաղվածք աշխատանքային գրքույկից կամ այլ փաստաթուղթ)

դ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

ե) գիտական աստիճանը հավաստող վկայականի պատճենը,

զ) գիտական կոչումը հավաստող վկայականի պատճենը (հավակնորդի ցանկությամբ),

է) հրապարակված գիտական աշխատանքների ցանկը (հավակնորդի ցանկությամբ),

ը) կադրերի հաշվառման անձնական թերթիկը,

թ) բնութագիր՝ աշխատավայրից կամ այլ կազմակերպությունից կամ անձից

(հավակնորդի ցանկությամբ),

ժ) «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի գործունեության ծրագիրը» թղթային և էլեկտրոնային սկավառակով, փակ և կնքված ծրարով,

ի) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից,

լ) 3x4 սմ չափի 2 լուսանկար:

39. Ռեկտորի թափուր պաշտոնի մրցութային ընտրությանը մասնակցելու համար հավակնորդի դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը՝ յուրաքանչյուր էջը համարակալված հանձնվում է խորհրդի քարտուղարին:

40. Հավակնորդների փաստաթղթերն ընդունելու նպատակով Խորհրդի քարտուղարը բացում է գործերի ընդունման գրանցամատյան՝ էջերի համարակալմամբ, կարված և կնքված: Գրանցամատյանի լրացված էջը ստորագրվում և կնքվում է: Փաստաթղթերն ընդունելիս Խորհրդի քարտուղարը հավակնորդին տալիս է փաստթղթերի ընդունման մասին ստացական:

41. Հայտերն ընդունելիս խորհրդի քարտուղարը պարտավոր է ստուգել դիմումի համապատասխանությունը՝ սույն աշխատակարգի 38-րդ կետով նախատեսված պահանջներին:

42. Հավակնորդի կողմից թերի փաստաթղթեր ներկայացնելու դեպքում ներկայացված փաստաթղթերը չեն ընդունվում, գրավոր կերպով հավակնորդն անձամբ տեղեկացվում է այդ մասին՝ փաստաթղթերը ներկայացնելու ժամանակ: Թերի փաստաթղթերը կարող են լրացվել դիմումի ներկայացման համար սահմանված ժամկետի ընթացքում:

43. Հավակնորդի դիմումը և փաստաթղթերը չեն ընդունվում, եթե չեն պահպանվել սույն աշխատակարգի 36-րդ կետով նախատեսված ժամկետները:

44. Դիմումների ընդունումն ավարտելու հաջորդ օրը Խորհրդի քարտուղարը ընդունված փաստաթղթերի փաթեթները հանձնում է Խորհրդի նախագահին, սույն աշխատակարգի 28-րդ կետով նախատեսված պահանջների ապահովման համար:

45. Հավակնորդի դիմումը և փաստաթղթերի համապատասխանությունը սույն աշխատակարգի պահանջներին ստուգվում և քննարկվում է դիմումի ներկայացման վերջնաժամկետից հետո սույն աշխատակարգի 28-րդ կետով նախատեսված օրը, որի արդյունքում Խորհուրդը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը,

ա) «Գրանցել որպես Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտորի մրցույթային ընտրության թեկնածու, անուն, հայրանուն, ազգանունը, ներառել քվեաթերթիկի մեջ»,

բ) «Մերժել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտորի մրցույթային ընտրության թեկնածուի անուն, հայրանուն, ազգանունը քվեաթերթիկի մեջ ներառումը»:

46. Ռեկտորի ընտրության նիստը դռնփակ է: Նիստին հրավիրվում են ռեկտորի

պաշտոնի թեկնածուները, Համալսարանի Իրավաբանական բաժնի ներկայացուցիչը և նիստի անցկացումն ապահովող այլ մասնագետներ:

47. Ռեկտորի մրցութային ընտրության համար անցկացվող Խորհրդի նիստն անցկացվում է հետևյալ հարցերով՝

ա) Թեկնածու(ներ)ին առաջադրված պահանջներին համապատասխանության մասին տեղեկատվության ներկայացում,

բ) Թեկնածու(ներ)ի ծրագրի ներկայացում,

գ) Թեկնածու(ներ)ին հարցերի ներկայացում.

դ) Խորհրդի անդամների ելույթներ,

ե) Հաշվիչ հանձնաժողովի ձևավորում,

զ) ռեկտոր ընտրելու նպատակով փակ գաղտնի քվեարկություն,

է) հաշվիչ հանձնաժողովի կողմից ընտրության արդյունքների հայտարարում

ը) Խորհրդի կողմից ընտրության արդյունքների մասին որոշման կայացում:

48. Խորհրդի նիստին թեկնածու(ներ)ի ներկայությունը պարտադիր է, բացառությամբ հարգելի դեպքերի: Թեկնածու(ներ)ի բացակայությունը հիմք չէ նրա թեկնածությունը քննարկումից կամ քվեարկությունից հանելու համար՝ բացառությամբ գրավոր ինքնաբացարկ հայտնելու դեպքերի:

49. Խորհրդի նախագահը ընտրության համար հրավիրված նիստը վարում է հետևյալ կարգով.

ա) Խորհրդի նախագահը ծրագրային ելույթների համար ձայն է տալիս թեկնածու(ներ)ին՝ որպես կանոն 10 րոպե տևողությամբ:

բ) Թեկնածուի ելույթից հետո Խորհրդի նախագահը հայտարարում է հարցերի հերթագրում, որից հետո Խորհրդի հերթագրված անդամները, ըստ հերթագրման հարթականության, ստանում են Թեկնածուին հարց տալու հնարավորություն: Հարցի տևողությունը չպետք է գերազանցի 2 րոպեն: Պատասխանը պետք է լինի մինչև 5 րոպե տևողությամբ: Թեկնածուին տրվող հարցերը կարող են վերաբերել միայն նրա կողմից ներկայացված փաստաթղթերին և ծրագրային ելույթին:

գ) Բոլոր թեկնածուներին ուղղված հարցերի և դրանց պատասխանների ավարտից հետո Խորհրդի անդամներին տրվում է ելույթի հնարավորություն: Խորհրդի անդամների ելույթները պետք է լինեն մինչև 10 րոպե տևողությամբ: Ելույթ ունեցողներին հարցեր չեն տրվում:

50. Խորհրդի նիստերը կարող են ընդմիջվել Խորհրդի որոշմամբ: Եթե փակ գաղտնի քվեարկությունը չի սկսվել մինչև ժամը 19:00-ն, նիստն ընդմիջվում է մինչև հաջորդ օրը ժամը 10:00-ն՝ անկախ նրանից, թե հաջորդ օրը աշխատանքային է թե ոչ: Եթե գաղտնի քվեարկությունը սկսվել է, ապա նսիտը շարունակվում է մինչև քվեարկության ավարտը և ընտրության արդյունքների մասին որոշման կայացումը:

51. Խորհրդի նիստում քվեարկությունից հետո Խորհրդի նախագահը հրապարակում է

թեկնածու(ներ)ի անուն, ազգանուն(ներ)ը: Եթե թեկնածու(ներ)ի անուն, ազգանուն(ներ)ը հրապարակելու պահին Թեկնածուի կողմից ինքնաբացարկ չի հայտնվում, ապա թեկնածություն(ներ)ը համարվում են վերջնական ներառված քվեաթերթիկներում:

52. Խորհրդի քարտուղարը կազմակերպում է ռեկտորի ընտրության քվեաթերթիկների տպագրությունը:

53. Խորհրդի նախագահը ներկայացնում է փակ գաղտնի քվեարկության ընթացակարգը:

54. Խորհուրդն իր կազմից, նիստին ներկա ձայների մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ ընտրում է առնվազն 3 անդամից կազմված հաշվիչ հանձնաժողով: Հանձնաժողովի անդամների թեկնածուներին առաջադրում են Խորհրդի անդամները՝ Խորհրդի կազմից:

Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ: Հաշվիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Հանձնաժողովը՝

ա) կազմակերպում է փակ գաղտնի քվեարկություն,

բ) կազմում է ռեկտորի ընտրության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը,

գ) հրապարակում է ռեկտորի ընտրության քվեարկության արդյունքները:

55. Հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամները ստորագրում են Ռեկտորի ընտրության քվեաթերթիկների հետնամասում, որը վավերացվում է Համալսարանի կնիքով:

56. Խորհրդի նախագահի կողմից քվեարկությունը մեկնարկելուց հետո Խորհրդի անդամը հաշվիչ հանձնաժողովից ստանում է քվեաթերթիկ և անդամացուցակում ստորագրում իր անուն, ազգանված դիմաց:

57. Խորհրդի անդամը քվեարկության ժամանակ ունի մեկ ձայնի իրավունք: Քվեարկության իրավունքի փոխանցումը Խորհրդի այլ անդամի չի թույլատրվում:

58. Ռեկտորի պաշտոնի մրցութային ընտրության մեկ թեկնածուի քվեարկության դեպքում՝ Խորհրդի անդամն իր որոշմամբ.

ա) քվեարկում է «Կողմ» թեկնածուին՝ կատարելով համապատասխան դատարկ քառանկյունում ✓ ձևի նշումը, կամ

բ) քվեարկում է «Դեմ» թեկնածուին՝ կատարելով համապատասխան դատարկ քառանկյունում ✓ ձևի նշումը:

59. Ռեկտորի պաշտոնի մրցութային ընտրության մեկից ավելի Թեկնածուների քվեարկության դեպքում քվեաթերթիկի մեջ այբբենական կարգով նշվում են թեկնածուների անուն, հայրանուն, ազգանունները և ներքևում «Բոլորին դեմ եմ» բառերը: Մեկից ավելի թեկնածուների քվեարկության դեպքում Խորհրդի անդամն իր որոշմամբ.

ա) քվեաթերկում է «Կողմ» միայն մեկ Թեկնածուի օգտին՝ կատարելով տվյալ թեկնածուի

անուն ազգանվան դիմաց դատարկ քառակուսում ✓ ձևի նշում կամ

բ) կատարում է ✓ ձևի նշում՝ «Բոլորին դեմ եմ» համապատասխան դատարկ քառանկյունում:

60. Քվեաթերթիկում չնախատեսված նշումների, ընդգծումների կամ այլ նշումների առկայության և(կամ) նշումը վանդակից դուրս լինելու դեպքում քվեաթերթիկը համարվում է անվավեր:

61. Քվեարկությունն ավարտելուց հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը Խորհրդի անդամների համար տեսանելի վայրում բացում է քվեատուփը, հանում մեկական քվեաթերթիկ և փոխանցում հանձնաժողովի անդամներին՝ տեսակավորելու համար:

Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ, մինչև քվեատուփից հաջորդ քվեաթերթիկը հանելը, կարող է պահանջել քվեարկության դնել քվեաթերթիկն անվավեր ճանաչելու հարցը: Քվեաթերթիկը համարվում է անվավեր, եթե քվեարկությունը կատարվել է սույն աշխատակարգի 60-րդ կետով սահմանված պահանջների խախտմամբ կամ պարունակում է ընտրողի ինքնությունը բացահայտող նշում:

Քվեաթերթիկի անվավերության վերաբերյալ հաշվիչ հանձնաժողովի որոշումն ընդունվում է հաշվիչ հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

62. Հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն, որտեղ նշվում է՝

ա) քվեաթերթիկ ստացած Խորհրդի անդամների թիվը՝ ըստ անդամացուցակում ստորագրությունների,

բ) քվեատուփում առկա քվեաթերթիկների ընդհանուր թիվը,

գ) անվավեր քվեաթերթիկների թիվը,

դ) թեկնածու(ներ)ի անուն, ազգանունը և յուրաքանչյուրի ստացած ձայները,

ե) «Բոլորին դեմ» նշումով ձայները (մեկից ավելի թեկնածուների դեպքում):

Արձանագրությունը ստորագրում են հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամները:

63. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը Խորհրդի նիստի ժամանակ հրապարակում է քվեարկության արդյունքները:

64. Քվեարկության ամբողջ ընթացքի վերաբերյալ հաշվիչ հանձնաժողովի առարկություն ունեցող անդամը քվեարկության արդյունքները ներկայացնելուց հետո կարող է Խորհրդին ներկայացնել հատուկ կարծիք:

65. Քվեարկության արդյունքների հիման վրա Խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝ ելնելով ստորև ներկայացված հիմնավորումներից:

1) Ռեկտոր ընտրվելու մասին

Ռեկտորի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, որը ստացել է Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը,

2) Ընտրությունը չկայացած ճանաչվելու և ռեկտոր չընտրվելու մասին

Ռեկտորի ընտրությունը քվեարկության առաջին փուլում համարվում է չկայացած՝

ա) եթե քվեարկված միակ թեկնածուն չի ստացել Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը կամ

բ) եթե քվեարկվել են երկու կամ ավելի թեկնածուներ և նրանք միասին չեն ստացել Խորհրդի անդամների ընդհանուր թվին ձայների մեծամասնությունը:

Այս դեպքում Խորհրդի որոշմամբ նշանակվում է նոր ընտրություն՝ ընդհանուր հիմունքներով:

3) Քվեարկության երկրորդ փուլ անցկացնելու մասին.

Քվեարկության երկրորդ փուլը անցկացվում է, եթե քվեարկվել են երկու կամ ավելի թեկնածուներ և նրանցից ոչ մեկը չի ստացել Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը: Այս դեպքում երկրորդ փուլ են անցնում առավել թվով ձայներ ստացած երկու թեկնածուները, եթե նրանք միասին հավաքել են Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը: Եթե քվեարկության արդյունքում կան երկուսից ավելի թեկնածուներ, որոնք սույն ենթակետին համապատասխան ստացել են առավել թվով հավասար ձայներ ստացած թեկնածուները:

Երկրորդ փույլի քվեարկության արդյունքների հիման վրա Խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

ա) ռեկտորի ընտրվելու մասին.

բ) ընտրությունը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրվելու մասին:

Ռեկտորի ընտրությանը քվեարկությունը երկրորդ փուլում համարվում է չկայացած, եթե քվեարկված թեկնածուներից որևէ մեկը չի ստացել Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը:

Ռեկտորի ընտրությունը Խորհրդի կողմից ճանաչվում է անվավեր, եթե այն ընթացել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Համալսարանի կանոնադրության կամ սույն աշխատակարգի նորմերի խախտումներով: Ընտրությունն անվավեր ճանաչվելու դեպքում նշանակվում է նոր ընտրություն՝ ընդհանուր հիմքերով:

66. Ընտրությունների արդյունքները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

67. Ռեկտորի ընտրության արդյունքը հաստատվում է Խորհրդի որոշմամբ:

68. Որոշման մեկ օրինակը Խորհրդի նախագահը ներկայացնում է պետական լիազոր մարմին

69. Ռեկտորի ընտրական գործընթացն արտացոլող բոլոր փաստաթղթերը արխիվաց-վում են Համալսարանում:

ԻՆԿՈՐՊՈՐԱՑՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ՝
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝